ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 01/2020թ

դիմումը մերժելու մասին

ք. Երևան 14.01.2020թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2020 թվականի հունվարի 14-ին, ուսումնասիրելով «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանի (այսուհետ՝ Դիմումատու) 2020 թվականի հունվարի 09-ի դիմումը, պարզեց.

1. 2020 թվականի հունվարի 09-ին «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանը դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ 2019թ. դեկտեմբերի 27-ին Նիկոլ Փաշինյանի կողմից իր ֆեյսբուքյան էջում կատարած գրառման համար «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները խախտելու վերաբերյալ եզրակացություն ընդունելու պահանջով:

Ուսումնասիրելով դիմումը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

2. «Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), 15000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի

վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

3. Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի (ՀՕ-172-Ն, 26.05.2011) 28-րդ հոդվածի ծանուցման մասի համաձայն՝ 28-րդ հոդվածը 23.03.18 ՀՕ-206-Ն օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն շարունակում է գործել մինչև 23.03.18 ՀՕ-206-Ն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված վարքագծի կանոնագրքի, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունումը (սահմանումը)՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը:
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է 2019թ. նոյեմբերի 19-ին՝ այսինքն՝ հանրային ծառայողների համար տիպային կանոնների (Վարքագծի կանոնագրքի) ընդունման համար օրենքով սահմանված վերջնաժամկետից (01.10.2018) ավելի քան մեկ տարի անց:
5. Դիմումատուն ներկայացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները խախտելու վերաբերյալ դիմում, մինչդեռ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը իրավասու է եզրակացություն ընդունել համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից ***վարքագծի կանոնների խախտման*** առկայության կամ բացակայության մասին, իսկ «Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները (Վարքագծի կանոնագիրքը) սահմանված չեն:

6. Ելնելով դիմումում բարձրացված հարցից՝ ***Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել***, որ «Հանրային ծառայության մասին» 2018թ մարտի 23-ի (ՀՕ-206-Ն) օրենքի 22 և 25 հոդվածների համաձայն հանրային ծառայողները պարտավոր են դրսևորել ***բարեկրթություն և հարգալիրություն***, ինչպես նաև հարգանք

իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվության նկատմամբ: Այնուամենայնիվ, վարքագծի կանոնների բացակայության պարագայում ծագած տվյալ հասարակական իրավահարաբերությունների՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից սոցիալական հարթակում հնչեցված խոսքը գնահատելու և այն խախտում որակելու համար Հանձնաժողովն իրավաչափ որևէ հիմք չունի: Հանձնաժողովը կարևորում է իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը, ինչը ենթադրում է, որ օրենքները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանի կողմից 2020թ. հունվարի 9-ին ներկայացված դիմումը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ